

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՋԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 41/08

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստում (արձանագրություն № 66/9) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2008թ. հուլիսի 15-ի դիմումը «EUROTOR» SARL ընկերությանը (610 RUE ALFRED NOBEL, ZAC LE MILLENAIRE, F-34000 MONTPELLIER (FR)) պատկանող «Chocolat de NAPOLÉON» (IR 660762) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱՃՄԴ-ի 30 դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքեթինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «Chocolat de NAPOLÉON» (IR 660762) ապրանքային նշանն իր անվամբ գրանցած EUROTOR (FR) ընկերությունը գրանցման թվականից ի վեր այն չի օգտագործել և չի օգտագործում ԱՃՄԴ-ի 30 դասի բոլոր գրանցված ապրանքների համար ավելի քան 5 տարի:

Ելնելով դրանից և առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է «Chocolat de NAPOLÉON» (IR 660762) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել գրանցված ԱՃՄԴ-ի 30-րդ դասի բոլոր ապրանքների համար, այն է՝ կակաո, շոկոլադե սալիկներ, շոկոլադի տեսականու տուփեր, հացին քսվող շոկոլադե պատրաստուկներ, կակաոի փոշի:

2008թ. հուլիսի 17-ին «Գրանդ Զենդի» Յայ-Կանադական ՅՁ ՍՊԸ-ն դիմել է ՅՅ մտավոր սեփականության գործակալություն՝ IR660762 և IR 726150 միջազգային գրանցումներով ապրանքային նշաններին վերաբերող գրանցված լիցենզային պայմանագրերի մասին տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, և 17.07.08թ. դ26-174 պատասխան նամակով տեղեկացվել է, որ ՅՅ մտավոր սեփականության գործակալությունում նշված ապրանքային նշանների նկատմամբ լիցենզային պայմանագրեր չեն գրանցվել, և այդ նամակները նույնպես կցվել են դիմումին:

Ի լրումն 2008թ. հուլիսի 15-ի իր դիմումի դիմողը 29.09.2008թ. և 08.12.2008թ. նամակներ է ներկայացրել ՅՅ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ, բերելով իր պահանջը հաստատող նոր փաստարկներ: Այդ նամակները նույնպես կցվել են դիմումին և հաշվի են առնվել քննարկման ժամանակ:

«Chocolat de NAPOLÉON» (IR 660762) ապրանքային նշանի սեփականատեր EUROTOR (FR) ընկերությունը (ճշտված հասցեն է՝ EUROTOR, 912 rue de la Croix Verte, Mini Parc B2t 2, 34090 MONTPELLIER, France) և ընկերության տնօրեն պրն.Կասաշվիլին (KASSACHVILI, 10, chemin des Bugadières F-34980 MONTFERRIER SUR LEZ FRANCE) «Յայաստանի Յանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն սահմանված կարգով ծանուցված լինելով բողոքի նյութերին, իր կողմից լիազորված ներկայացուցիչ ՅՅ արտոնագրային հավատարմատար Ն.Թումանյանի միջոցով 25.09.2008թ. և 04.11.2008թ. բողոքարկման խորհուրդ առարկություններ են ներկայացրել՝ 2008թ. հուլիսի 15-ին գործակալության բողոքարկման խորհուրդ «Գրանդ Զենդի» Յայ-Կանադական ՅՁ ՍՊԸ-ի ներկայացված բողոքի դեմ:

EUROTOR (FR) ընկերության ներկայացուցիչը հայտնում է, որ ընկերությունը կտրականապես համաձայն չէ «Chocolat de NAPOLÉON» (IR 660762) ապրանքային նշանի չօգտագործման վերաբերյալ դիմողի հիմնավորումի հետ և ներկայացրել է փաստարկներ և ապացույցներ, որոնք սպառիչ պարզաբանումներ են տալիս դիմողի կողմից արժարծված հարցերին, ինչպես նաև հաստատում են նշանի բարեխիղճ օգտագործումը Յայաստանի Յանրապետությունում, մասնավորապես՝ բողոքագրին նախորդող 5 տարվա ընթացքում:

1. Նախ և առաջ, EUROTOR-ի ներկայացուցիչը պարզաբանել է գործին առնչվող բոլոր ընկերությունների միջև կապը, այն է.

ա) EUROTOR ընկերությունը «Chocolat de NAPOLÉON» (IR 660762) նշանի սեփականատերն է:

բ) CEMOI Group կազմակերպությունը շնկոլադե արտադրատեսակներ և հրուշակեղեն արտադրող տարբեր գործարանների խմբի միավորումն է, որի գործարաններում «CHOCOLAT DE NAPOLÉON» և «NAPOLÉON» ապրանքային նշաններով մակնշված ապրանքը արտադրվում է բացառապես EUROTOR -ի համար:

գ) DIPA SAS ընկերությունը, որը CEMOI Group-ի անդամ առևտրային կազմակերպությունն է, EUROTOR ընկերության մատակարարն է և լիազորված է վաճառելու CEMOI Group-ին պատկանող

տարբեր գործարաններում արտադրվող արտադրանքը, մասնավորապես «CHOCOLAT DE NAPOLEÓN» և «NAPOLEÓN» ապրանքային նշաններով շոկոլադե արտադրատեսակները:

դ) EUROTOR ընկերությունը CEMOI Group-ի բացարձակ ներկայացուցիչն է Արևելյան Եվրոպայում և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում:

ե) “Երկու Եռյակ” ՍՊԸ և “Գահեստ Գրուկ” ՍՊԸ ընկերությունները CEMOI Group-ի, DIPA SAS-ի և EUROTOR-ի պաշտոնական առաքիչներն են Հայաստանում:

2. EUROTOR ընկերությունը ձեռք է բերում CEMOI/ DIPA-ից հիշյալ նշաններով մակնշված ապրանքը, համաձայն իր պատվերների (տես EUROTOR-ի 15.07.2003 - 15.07.2008թ.թ. ժամանակահատվածում DIPA-ին պատվերների պատճենները՝ 9 հատ, դրանց կից հաշիվ-ապրանքագրերի հետ, ստացվել են ըստ DHL No 575 6538 885 / 30.10.2008թ. հաշիվ-ապրանքագրի 03 հոկտեմբերի, 2008թ., կցված է):

3. EUROTOR ընկերության ներկայացուցիչը նշել է նաև, որ ներկայումս Հայաստանում վաճառքում գտնվող՝ «Chocolat de NAPOLEÓN» անվանումը կրող բոլոր ապրանքների վրա որպես արտադրող նշված է CEMOI, Ֆրանսիա: Ընդ որում, “տրյուֆել” կոնֆետի տուփի վրա նշված է նաև, որպես սպառողական ծառայություններ իրագործող («service consommateurs»)՝ CEMOI Chocolatier, 2980 avenue Julien Panchot, 66968 PERPIGNAN Cedex - FR, ընկերության, որն ընդգրկում է նաև արտադրողի անունը (պարզաբանումը տրված է նաև 25.09.2008թ. նամակում, կետ 1):

Ինչ վերաբերում է պիտակների վրա EUROTOR անվանման նշելուն, ապա, ըստ ընկերության ներկայացուցչի պարզաբանման, այդ անվանումը նշվել է ընդհուպ մինչև 2007թ. արտադրվող/վաճառվող ապրանքների պիտակների վրա, որտեղ մի քանի լեզվով, ներառյալ հայերենը, գրված է . «Արտադրված է Եվրոպական Միության կողմից EUROTOR-ի համար, 34090 Մոնպեյե, Ֆրանսիա» (տես «CHOCOLAT DE NAPOLEÓN» շոկոլադի սալիկների 04.08.2006, 03.12.2006 և 04.12.2006թ.թ. երեք պահպանված պիտակների նմուշները):

4. EUROTOR-ի ներկայացուցիչը ընդունում է, որ գրանցված ապրանքային նշանի պատկերային մասը՝ դիզայնը, ժամանակի ընթացքում սեփականատիրոջ կողմից ենթարկվել է որոշակի փոփոխության: Միաժամանակ նա կարևորում է այն հանգամանքը, որ փոխվել են միայն նշանի տարբերակիչ բնույթը չփոխող տարրերը, որոնք էապես չեն անրադառնում նշանի ընդհանուր ընկալման վրա, հետևաբար նշանը, ամեն դեպքում, սպառողի կողմից ընկալվում է որպես միևնույն սեփականատիրոջը պատկանող նշան, ինչը չի կարող առաջացնել որևէ շփոթություն ապրանքի և արտադրողի վերաբերյալ:

04.11.2008թ. նամակին կից ներկայացվել են նշանի դիզայնի փոփոխության դիմամիկան պատկերող շոկոլադի սալիկի պիտակների նմուշները, այն է .

- գրանցված նշանին համընկնող 1997 – 2005թթ. նմուշները՝ 9 պիտակ / փաթեթավորում + 1 գովազդային թերթիկ:
- 2006թ. նմուշը, որում փոխված է 19-րդ դարի ֆրանսիական բանակի զինվորական հագուստով սպայի՝ (Նապոլեոնի), պատկերը՝ 3 հատ,
- 2007թ. նմուշը՝ 1 հատ:

Ներկայացվել է նաև շոկոլադի տեսականու 2007 թվից մինչև այսօր վաճառքում եղած տուփերի գովազդային թերթիկը՝ 1 էջ և տրյուֆելի 2008թ. տուփի նմուշը:

5. Համեմատելով ներկայացված նմուշները, EUROTOR ընկերության ներկայացուցիչը գալիս է այն եզրահանգման, որ նշանի բոլոր հիմնական տարրերը, այն է. սպայի պատկերը, որը որոշակիորեն ընկալվում է որպես Նապոլեոնի պատկեր, նշանի ֆոնի պատկերային կատարման լուծումը և ամենակարևորը, նշանի բառային մասը՝ հնչյունային գործոնը, որը նշանի տարբերունակությունը գնահատելիս, կատարում է որոշիչ դեր արտադրողի և/կամ ապրանքի պատկանելիության վերաբերյալ (խանութներում, ինչպես նաև մաքսային մարմինների հայտարարագրերում «NAPOLÉON» անվանումը կրող ապրանքը նույնականացվում են ըստ անվանման, այն է՝ «NAPOLÉON»):

Այսպիսով, ելնելով վերը նշվածից և կից բերվող փաստաթղթերից, EUROTOR ընկերության ներկայացուցիչը խնդրել է մերժել «Գրանդ Քենդի» Հայ-կանադական ՀԶ՝ ՍՊԸ-ի դիմումը և «Chocolat de NAPOLÉON» IR 660762 միջազգային գրանցման գործողությունը ՀՀ-ում թողնել ուժի մեջ գրանցված բոլոր ապրանքների նկատմամբ:

Առարկությանը կից ներկայացվել են՝

1. EUROTOR-ի՝ հասցեի փոփոխության մասին նամակը,
2. DIPA -ի նամակը՝ EUROTOR-ի և DIPA -ի կապի մասին
3. DIPA -ի նամակ - հավաստագիրը՝ գործին առնչվող բոլոր ընկերությունների կապի մասին,
4. ՀՀ-ում վաճառքի հաշիվ - ապրանքագրերի պատճենները,
5. «Երկու Եռյակ» ՍՊԸ-ի՝ ՀՀ ներկրվող ապրանքների տեսականու 2005թ. կատալոգը,
6. ՀՀ մաքսային մարմին ներկայացված՝ առաքված ապրանքների վերաբերյալ հայտարարագրերի պատճենները,
7. DIPA / EUROTOR - «Երկու Եռյակ» ՍՊԸ / «Գահեստ Գրուփ» ՍՊԸ հաշիվ - ֆակտուրաների պատճենները՝ 12 հատ,
8. Համապատասխան լիազորագրերի բնօրինակները՝ թարգմանություններով:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի ըստ ելության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ բավականի փաստաթղթեր են ներկայացվել «Chocolat de NAPOLÉON» ապրանքային նշանի օգտագործումն ապացուցելու համար: Տվյալ դեպքում ստացվել է այնպես, որ նշանի սեփականատերը մի կազմակերպություն է՝ EUROTOR ընկերությունը, իսկ ապրանք արտադրողը՝ մեկ այլ կազմակերպություն՝ CEMOI Group (շոկոլադե արտադրատեսակներ և հրուշակեղեն արտադրող տարբեր գործարանների խմբի միավորում): Ապրանքը Հայաստան է ներմուծվում, այսինքն, շրջանառության մեջ է դրվում ապրանքային նշանի սեփականատիրոջ կողմից և համաձայնագրի հիման վրա, երկու դեպքն էլ առկա է:

Ինչ վերաբերում է նշանների բովանդակությանը, ապա բողոքարկման խորհուրդը ընդունում է, որ որոշակի տարբերություն կա գրանցված և օգտագործվող նշանների պատկերային մասում, դա վերաբերում է Նապոլեոնի պատկերին: Սակայն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետի համաձայն ապրանքային նշանի գրանցման գործողությունը չի կարող դադարեցվել բոլոր

ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ 22-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերով, եթե՝ «բ) ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ այն օգտագործելու իրավունք ունեցող անձի կողմից ապրանքային նշանն օգտագործվել է այնպիսի ձևով, որը տարբերվում է գրանցվածից դրա տարբերակիչ բնույթը չփոփոխող միայն առանձին տարրերով»:

Նման մոտեցումը հիմք ընդունելով համակցված նշանի նկատմամբ, որտեղ NAPOLÉON բառային տարրը հանդիսանում է տվյալ ապրանքային նշանի հիմնական ընկալման տարր, առավել ևս, երբ պատկերային մասը թեև որոշակի ձևով փոփոխված է, սակայն մնում է նույն անձնավորության պատկերը, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է ընդունել գրանցված ապրանքային նշանի օգտագործման փաստը:

Դիմողի ներկայացուցիչը ակնարկեց, որ ներկայացված մաքսային փաստաթղթերում հստակ չի երևում կնիքը, բացի դրանից, որպես արտադրող նշված է CEMOI-ն, սակայն այդ առումով բացակայում է համապատասխան գրանցված լիցենզային պայմանագիր: Մինչդեռ Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին (TRIPS) համաձայնագրի 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետով պարզաբանվում է, որ նշանի օգտագործումն այլ անձանց կողմից համարվում է որպես այդպիսին և բավարարում է օգտագործման պահանջներին, եթե առկա է սեփականատիրոջ կողմից հսկում: Նա պարզաբանեց նաև, որ նշված համաձայնագրի սահմաններում սեփականատիրոջ կողմից հսկում կարող է համարվել միայն, եթե ապրանքն արտադրողը համարվում ընկերության ստորաբաժանումը (ներքին ձեռնարկությունը), կամ առկա է լիցենզային պայմանագիր:

Սակայն բողոքարկման խորհուրդը համարում է, որ տվյալ դեպքում լիցենզային պայմանագրի առկայությունը ՀՀ-ում անհրաժեշտ չէ, քանի որ խոսքը գնում է ոչ թե Հայաստանում, այլ ուրիշ երկրում արտադրված և Հայաստան ներմուծված ապրանքի մասին, երբ տվյալ ապրանքը ներմուծող ընկերությունն է առաքիչը անմիջականորեն նշանի սեփականատիրոջ կողմից: Այստեղ կարևոր է նշանի օգտագործումը ապրանքի նկատմամբ, որն ակնհայտ է:

Հայաստանում «Chocolat de NAPOLÉON» և «NAPOLÉON» ապրանքային նշաններով մակնշված արտադրանքի պաշտոնական առաքիչներ հանդիսացող «Երկու Եռյակ» ՍՊԸ և «Գահեստ Գրուկ» ՍՊԸ ընկերությունների լիազորված ներկայացուցիչ Գ.Ստեփանյանը հաստատեց ներկայումս Հայաստանի շուկայում նշված ապրանքային նշաններով ապրանքի առկայության փաստը: Նա պարզաբանեց, որ նշված ապրանքատեսակը արտադրվում է ևրոպական տարբեր երկրներում գտնվող CEMOI GROUP ընկերության գործարաններում EUROTOR ընկերության պատկերով, որը հանդիսանում է այդ ընկերության անբաժանելի մաս կազմող արտաքին արտահանման բաժին: EUROTOR ընկերության միջոցով է իրականացվում «Chocolat de NAPOLÉON» և «NAPOLÉON» արտադրատեսակների արտահանումը ինչպես Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներ, այդպես էլ ԱՊՀ-ի երկրներ: Նշված ապրանքները 1999 թվականից օրինական ճանապարհով ներմուծվում է Հայաստան, ինչը հաստատվում է բողոքարկման խորհուրդ ներկայացված՝ համապատասխան մաքսային կնիքներով դրոշմված փաստաթղթերով, և այդ ժամանակահատվածում չի եղել մի տարի, որ տարվա ընթացքում 4-5 անգամ այդ ապրանքը չներմուծվեր Հայաստան: Նա ավելացրեց նաև, որ չգիտի, թե ո՞րն է համարվում «ողջամիտ ծավալներով օգտագործում», բայց համարում է, որ նշված արտադրատեսակների տարեկան մոտ

160 000 հատի ներմուծումը Հայաստան, ինչը գումարային առումով կազմում է տարեկան մոտ 200 000-300 000 EUR, կարելի է համարել բավարար:

Ամփոփելով EUROTOR (FR) ընկերության ներկայացված բոլոր փաստարկերը, բողոքարկման խորհուրդը ապացուցված է համարում Հայաստանում «Chocolat de NAPOLEON» (IR 660762) համակցված ապրանքային նշանի ողջամիտ ծավալներով օգտագործումը նրա սեփականատիրոջ՝ EUROTOR (FR) ընկերության կողմից՝ «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2008թ. հուլիսի 15-ի դիմումին նախորդող 5 տարվա ընթացքում: Հետևապես բողոքարկման խորհուրդը հիմքեր չի տեսնում բավարարելու դիմողի կողմից ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նշված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 30 դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ բողոքում ներկայացված պահանջը:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 73-րդ կետի «բ» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2008թ. հուլիսի 15-ի դիմումը և EUROTOR (FR) ընկերության «Chocolat de NAPOLEON» (IR 660762) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան